## 9. ՇԱՀԶԱԴԵՆ

Թաղավորըմ կէղնի, ուրեն ավլատ-թավլատ չէղնի։ Օրըմ թագավորն ու ուր կնիկ նստուկ կէղնին, կժղլին, կտեսնան օր դարվեշըմ դըրսեն մտավ ներս։

Դարվեշ մտավ ներս, բարև տվեց, ասեց.— Թագավոր ապրած, ի՞նչ էր կֆքրենք։

Թագավորն ասեց.— Ի՞նչ էր կֆքրենք, ես ու իմ կնիկ էկեր ինք մեռնելու դուռ, վախենաք վաղ մեռնիք, ժառանգըմ չէղնի, նստի մեր մալ ու մլքի վրեն. զէգ էր կֆքրենք։

Դարվեշն ասեց.—Ես ձզիկ խնձորըմ կիտամ, կես դու կուտիս, կես լե կիտաս քու կնկան՝ ուտե։ Աստծու ամրով տարին թմի, չթմի, ձըզիկ աղե մը կէղնի։ Բլե զանուն չդնեք, հար ես հ՝իգամ, տասնուչորս օրեն ես կիգամ։

Էղավ օր տարին թմավ։ Թագավորի կնիկ պառկավ, բերեց տղե մը։ Ի՞ման օր զանուն դնեն. տասնուչորս օր թմավ, դարվեշ էկավ մտավ ներս։

Ասեց.— Հ՝որի՞ն եք ժողվի։

Թագավորն ասեց.— Դու հ՝անգըցար, չէկար, ժողվեր ինք, զտղի անուն կդնեք։

Դարվեշ ասեց.— Ջասի՞ զտղի անուն չդնեք, հար ես հ՝իգամ. էդոր անուն դուք ի՞նչ կըռնաք դնեք, էդոր անուն Շահզադա է։

Շահզադեն է, տաս-տրսնուհինգ տարեկան օր էղավ, ձեռք հ՝ուր թալեր, կրեերեր ցած. հար վիրն օր ձեռք տվեց, սպանեց դրեց գետին։ Սորա հալին, տեսան, օր էդոր ձեռք չկառնա քաշե, հ՝ելան գացին թա-

գավորի մոտ։ Ասին.— Յա զմդի խայիլիս մնաք քու հողու մեջ, յա զքու տղեն, էլ մենք չընք կառնա քաշի քու տզի ձեռք։

Թագավորն է, կանչեց զուր օնիքիլար, ասեց.— Երկրացին հըմլա կասե, դուք ի՞նչ կամք կիտաք. ժողովուրդ օր էրթա, էլ թագավոր ի՞նչ կէնե։

Օնիքիլարն ասեց.— Զքու տղեն սուրկուն էրե, թըղ էրթա։

Կանչեց բերեց զտղեն, ասեց.— Լաո, ժողովուրդ հըմլա գանդատըմ է տվի։ Օր ժողովուրդ էրթա, ես էլ ի՞նչ կէնիմ ղթագավորութեն։ Էդոր եսլեն էն է, օր զքզիկ էնիմ սուրկուն, էրթաս հեռենաս, ժողովուրդ ըռհաթի։ Ախըր ասի, չասի՝ քու վրեն չկառցա։

Տղենն ասեց.— Հերիկ, ես քու հ՝առջև չըմ կառնա խոսա, դու իմ հերն իս, ես լե քու տղեն։ Հ՝ուզիս՝ կբոնիս իմ ձեռքեն լե, թալիս գետ, մինակ քենե մեկ բան կուզիմ. թուրըմ իտաս ընծիկ, օր հ՝ուր օր ղարկիմ՝ չչարդի։ է, կէրթամ, բան չըմ ասի։

Բերեց թուրըմ տվեց, տղեն ժըժխեց, շըխըթաց էկավ գետին։ Հար ինչ թուր բերեց, չէղավ։ Զուր թագավորական թուր բերեց, տվեց, չէղավ։ Տղեն առավ, մեկ հեղ տըտմեց, փըցավ հ՝ընկավ գետին։

Տեսավ օր ինչ թուր բերեց, ֆայդա չէրեց։ Թագավոր հ՝ելավ կանչեց զուր օնիքիլար, առավ էկավ։ Մաճլիս էրեց. «Բալքեմ թուրըմ էնդոնք գտնան, իտանք էդա տղի ձեռք, հեռեցուք մըր երսեն»։ Մաճլիսն էկավ նստավ, ասեց. էդոր չարեն մեկ մարդ մինակ գինա, էդա տեխ իրեք-չորս հարիր տարեկան խըլըշճի մը կա, կանչենք, բերենք զէնի, բալքեմ էնի յոլե մը հանե։

Հ՝ելան մարդ ճամբըցուցին, էգ խըլըշճու հ՝ետև, ասին՝ զքզիկ թագավոր կկանչե։

Ասեց.— Ես չըմ հ՝իգա, թագավորին պետք է, ինք թըղ հ՝իգա իմ խեչ։

Թագավորի ճար կտրավ, հ՝ելավ ինք, էկավ խըլըշճու մոտ, ասեց. «Չեղավ, ես կէրթամ, զայիր էն մարդ ըխտիյար է, չը կառնա հ՝իդա»։ Հ՝ելավ էկավ, ասեց.— Խըլըշճի, իմ տղեն շատ խվաթով է, ինչ թուր տվինք ուր ձեռք, դինք չզավթեց, իմա՞լ թուրըմ պետք, օր զէդի զավթե։

Խըլըշճին ասեց.—Կանչեք դինք թըղ հ՝իգա էդա տեխ, տեսնամ ի՞նչ խըդար է ուր խվաթ, օր էնդոր կորա ես լե նստիմ կանիմ։

Կանչին Շահզադեն, առան էկան։

Խըլըշճին ասեց.—Շահզադա, զքու ձեռք տուր իմ ձեռք, տեսնամ քու խվաթն ինչ խըդար է, օր ասեմ։ Բըլե զիմ ձեռք չճըխտիս։

Շահզադեն տվեց զուր ձեռք խըլըշճու ձեռք, խըլըշճին իշքեց, ասեց.— Շատ խվաթով է, տակ

թուր զէդի չզավթե, մինակ մեկ թուր կա, օր զէդի կղավթե։ Հանդե ֆըլան սարու գլուխ էկեղեցի մը կա, յոթ տարվան

հեղրմ կբացվի, էն լե մեկ սահաթ կմնա բաց, էն թուր մինակ կզավ-թե զէդի։

Դառցավ խըլըշճին մեկ լե Շահզադին ասեց.—Կելնիս կէրթաս էն էկեղեցին, ֆլան սարու գլուխն է, կկանիս արևելոց դին, իրեք ծունկ աղոթք կէնիս, վըր չորսին կբացվի, յոթ տարին թմեր է։ Դուռ օր բացվավ, կէրթաս ներս, սունըմ կա, թուրըմ կախուկ է հ'ուրնե, թրի բալչըղ մատնեկըմ է, իրեք անդամ լե թրի հ'առեշ աղոթք կէնիս, կառնես զթուր. կելնիս դուրս, քանի դուռ շտրվեր է։ Օր առար, էլար դուրս, կառնիս կեգաս իմ խեչ։

Թագավոր շնորհակալ էղավ, առավ զուր տղեն ու դառցավ էկավ։

Շահզադեն օր դառցավ էկավ, քաշեց ձի մը դուրս, հեծավ ու հ'ընկավ ճամբախ։

Գնաց, գնաց խըլըշճու ցուցուցած սար, հ'ելավ դուրս, տեսավ զէկեղեցին, չոքավ ու իրեք ծունկ աղոթք էրեց։ Վըր չորսին՝ դուռ բացվավ, մտավ ներս, տեսավ օղորդ, սնեն թուրըմ կա կախուկ, բալչըղ լե մատնեկըմ է։ Իրեք հեղ լե էդ տեխ աղոթեց, առավ զթուր, դառցավ էկավ խըլըշճու խեչ։

Խըլըշճին օր զթուր տեսավ, ասեց.— Շահզադա, էդա թրի ու մատնըկի զորութեն դինաս ի՞նչ է։

Տղեն ասեց.— Չէ։

Խըլըշճին ասեց.— Էդա թրի ու մատնըկի զորութեն էն է, օր քու վրեն էղնի, աշխարհ թափի քու վրեն, չկառնան, զքու մեջք դնեն գետին, բըլե օր գողնան քու մոտեն, դու էնդոնց հ'ետև քառսուն օր սաղ կմնաս ու կմեռնիս։

Հ'ելավ թամանա էղավ խըլըշցուց, դառցավ էկավ հոր խեչ, պագեց զհոր ու մոր ձեռք ու հ'ընկավ ճամբախ, գնաց։

Հ'ընկավ ճամբախ գնաց։ Շատ ու քիչ գնաց, գնաց ուրիշ թագավորի մը հողու մեջ, անվերի սարըմ կեր, նը ճուն ու նը ճանավար կեր, գնաց հ'աղբրի մը վրեն իջավ, ըրդուճըմ հաց կուտեր։ Նստավ հ'աղբրի վրեն, տեսավ տալուխանլի տղե մը էնդիեն էկավ էկավ։ մոտեցավ, ասեց.— Բարև քզիկ, ախբեր։

Շահզադեն ասեց.— Աստծու բարին, կտրիճ մանուկ, էկո նստի, հաց ուտենք։

Նստավ, հաց կերան, խըլըսան, տալուխանլի տղեն հարցուց Շահզադից.— Ախբեր, դու իմա՞լ էղեր է, էկեր ես, հ'ելի ըտա անվերի սարու գլուխ։

Շահզադեն, իմալ օր մենք պատմինք, հըմալ մեկիկ-մեկիկ պատմեց տղին։

Օր պատմեց, խըլըսավ, տղեն ասեց.— Իմ դարդ լե քու դարդից է։

Ասեց Շահզադեն.— Քու անուն ի՞նչ է։

Տղեն ասեց.— Տիրացու է։

Ասեց Շահզադեն.— Տիրացու, իմա՞լ քու դարդ լե իմ դարդից է, պատմե տեսնամ։

Տիրացուն ասեց.— Ես ֆլան թագավորի տղեն իմ։ Ես մտա վարժատուն, կարդացի, շատ կարդացի, էղա փիլիսոփա, որ մեկ քաղքի, գյուղի մեջ օր կօլըրտենք, ըսանկ կիշկենք, գինենք հ'եր կմեռնեն։ Կասենք ֆլանքյաս, դու ֆլան օր կմեռնիս, դու ֆլան սահաթ։ Ի՞նչ գլխացավանք էնիք, հ'երկնուց-գետնուց քննում գինեք։ Վիրն օր կասենք՝ դու ֆլան սահաթուն կմեռնիս, էլ զուր հոդու թարկ կիտեր, դադկ ու դաղումի չիշքեր, կէրթեր կնստեր ուր տուն, հար հ'իդեր ուր մեռնելու օր, պառկեր մեռներ։ Հըմալ էղավ, օր դսդկ ու դաղումե կտրան, հարքյաշ մարդ էլ ուր տնեն դուրս չըր հելներ, կվախենեն հիսնե։ Ճար ուրանց կտրավ, հ'ելան հ'երկըրով ժողվան, էկան իմ հոր խեչ, ասին. «Էդա մարդ չիշխընա հ'ելնի դուրս։ Կվախենա, ուրեն ասեն՝ դու կմեռնիս։ Ցամ մզիկ իս խարուլ, յամ քու տղեն. թը չէ՝ էդա հ'երկիր մարդ չմնա քու տղի դարդից»։ Էդոր վրեն հ'ելավ կանչեց ղիս, ասեց. «Էաո, հ'երկրացին հրմլա գանդատ կէնե, հ'երկրացին էրթա, ես էլ ինչ կէնիմ գթագավորութենս։ Բռնեց զիս, էրեց սուրկուն, հըմկա հասկացա՞ր օր իմ դարդ լե քու դարդեն է։ Էղնեք ախբեր, մեռնենք հիդրաց, ապրենք հիդրաց։

Շահզադեն ասեց.— Թըզ էլնի։

Հ'ելան հ'ընկան ճամբախ ու էկան։

Սարերով կիգեն, շատ էկան, քիչ էկան, էկան անվերի սարու մը գլուխ, հ'ելան հ'աղբրի մը վրա նստան։ Տեսան օր էնդիեն մարդըմ կիգա։ Էկավ հասավ մոտ ուրանց, բարև տվեց, առան զբարև։ Ասին.— Էկո նստի, հաց ուտենք։

Նստան հաց կերան, խըլըսան, Շահզադեն հարցուց ասեց.— Դու հ'ուստե՞ն իս։

Տղեն ասեց.— Ես ֆլան հ'երկրի թագավորի տղեն իմ, իմ անուն Լողորդ է։

Շահզադեն ասեց.— Քու դարդն ի՞նչ է։

Տղեն ասեց.— Ես լողորդ ենք, ձկան պես կօլըրտենք ծովու մեջ, ինչ օր թե ջրի հ'երես, թե ջրի տակ հ'ընկներ ձեռքիս մեջ, էլ չըր ազատեր։ Շատ կյամիկ բաթմիշ էրի, շատ մարդիկ խեղդի, ձկներ բիլա հ'իսնե կփախնեն։ Հըմալ էղավ, օր ծովու վրեն ճամբախ կտրի։ Հ'ելան հ'երկրով ժողվան, էկան իմ հոր խեչ գանդատ էրին։ Ասին. «Էլ քու տղի ձեռք չկառնանք քաշենք, ծովու վրավու ճամբեն տկմանց կտրեր է, վերևանց կտրեր է, հըմլա էղնի հ'ըմենկս անոթից կմեռնենք, յամ մըզիկ իս ըռ-

դա, յամ քու տղինն։ Իմ հեր լե մտածեց, տեսավ օր առանց ահալու թա-
գավորութեն թագավորութեն չէ, հելավ գիս սուրկուն էրեց։

Տիրացուն ասեց.— Էդոր դարդ լե մըր դարդեն է։

Էղան իրեկ ախբեր ու հ'ելան հ'ընկան ճամբախ, էկան։

Էկան, շատ էկան, քիչ էկան, տասնավուր ճամբախ էկան, քաղաքըմ հ'ելան դուրս։ Էկան քաղքի մեջ, տեսան օր քաղքի չորս բոլոր բաղան է քաշուկ ու մասարի մեջ են։ Մարդ նը քաղքեն դուրս կէլնի, նը ներս կմտնի։ Էլ քաղաք չըն մտնի։ Շահզադեն զէրկու ախբերն կթողե ձորու մը մեջ, կէրթա կտեսնա, օր բարակ ծուխըմ կէլնի։ Կբռնե զծուխ, կէրթա կտեսնա, օր քսան կանթեն պղինձըմ դրուկ է վըր օջըխին ու զատ կէփին, ախչիկըմ լե նստուկ է էդ տեխ։

Կվերցու զքսան կանթ պղինձ, կդնե մեկ դին, սորա զուր ջըղարեն կկպու, կվերցու զպղինձ դնե վրեն։

Ախչիկն կասե.— Խուրրան էղնեմ դլխուդ, արևուդ, կտրիճ։ Գնա էդա տեխեն, հմկա դիկան քսան դև, զքզիկ կտոր-կտոր կէնեն։

Շահզադեն կհարցու, կասե.— Դևեր ի՞նչ դիով ին դացի։

Ախչիկ կասե.— Դէտա ին գացի, դու էդա ճամբով գնա, հ'ըռաստ չի գան քզիկ։

Ուրիշ ճամբե մը կցուցու։

Տղեն կհարցու, կասե.— Ախչի, դու իմա՞լ իս էկի էդա տեխ։

Ախչիկն կասե.—Էն քաղաք չէկա՞ք, օր բաղան էր քաշուկ բոլոր։ Էն իմ հոր քաղաքն է։ Էդա տաս տարի իմ հեր մասարի մեջ է։ Գիս փախցուցեր ին, բերի։ Տըս ըւհաթ չըն մնա, հ'ըմնոր կէրթան կանեն կռիվ, հար հ'իրկուն կկռվեն, հ'իրկուն կթողեն, կիգան։

Շահզադեն զախչկա բեռնի թախրիրն օր առավ, հ'ընկավ դևերու ճամբի հետ, գնաց։ Տեսավ օր էն դիեն քսան լե հ'ընկած են հ'իրարու հետ, կիգան։ Քաշեց զթուր, հ'ընկավ մեջ ուրանց։ Զքսանի գլուխ լե կըտրեց, բերեց բաղնի տակ, վերցուց մեկ-մեկ, թալեց բաղնից ներս։ Օր թալեց բաղնից ներս, էկավ զախբըրտանք հ'իմցուց, ասեց.— Հ'ելեք, զդևեր սպանի, զքսան լե էրի էրկու-էրկու կտոր, թափի բաղնեն ներս։ Դուք գացեք ախչկա խեչ, հար ես հ'իգամ։

Զախբըրտանք օր ճամբու դրեց, գացին, ինք հ'ելավ բերեց հարիր։ Հատ սըկտա շինեց ու մեկ-մեկ զարկեց պատ։ Հ'ելավ հ'իշավ ներս, մտավ քաղաք, գնաց պառվու մը տուն, էղավ մըսաֆըր։

Լուսմութ հ'ելավ ժողովուրդ, տեսան օր ուրանց տուշման դևեր էրկու-էրկու կտոր էրած ին ու թալած ներս։ Գացին թագավորին հ'իմաց տվին. «Ըպա չասիս, մըր դուշման քսան դևն էլ էրած են էրկու կտոր, բերած են, թափած բաղնից ներս»։

Թագավոր թալալ տվեց կանչել, թե. «Էդ ու օրձ, մարդ չմնա ուր

տուն, հ'ելնի հ'իգա էդա ջանտրկներու վրեն ջրռպվի, վերցու, մեկ-մեկ թալե բաղնից դուրս, տեսնամ ո՞ր կառնա թալե։ Օր թալեց, ինչ օր հ'ուզե՝ կիտամ»։

Հ'ելան քաղաք քաղքով, թաղ թըղով, նը օրձ մնաց, նը էդ, էկան ջրորբվան, չը կառցան։ Պառավըմ էկավ ասեց.— Տղե մը մըր տուն կա, իմ խելք հոնկուց կկտրե։

Ճամբեցին էրկու մարդ, օր առնեն ղտղեն, հ'իգան։ Էդ էրկու մարդըն է, էկան օսմանցու զավդիի պես կանան դուռ, քֆրեցին.— Քոփակ օղլի, դու չը լսիս, օր թագավոր թալալ է տվի կանչել՝ օրձ, էգ, մարդ չմնա, հ'ելնի հ'իդա ջրոբբվի էդա ջանդրկներ, տեսնամ ո՞ր կառնա թալե բաղնից դուրս, հ'որե՞ն իս նստի հ'ոդի։

Տղեն հերստավ վըր էդոնց.— Նը դուք ու նը ձըր թագավորն էղնեք, բիլա հախ տեխ հ'որի՞ խալխին կքֆրեք։

Բռնեց ձեռքե ուրանց, զարկեց պատ, էղան լոջ ու մանցին։

Գացին թագավորին ասին։ Թագավորն ասաց.— Էրկու մախուլ մարդ Ճամբեք, մարդու պես թըղ էրթան առնին, հ'իգան։ Խալխին հ'որի՞ վատ ու գեշ պիտի ասեն։

Էկան էրկու քյամալլի մարդ, կանչին առան գացին։

Առան գացին։

Թագավորն ասեց.—Տղա, զքզիկ էդա ջանդրկներ հ'ապով իմ կանչի, տեսնամ՝ կառնա՞ս վերուս, թալիս էն դին։ Որն օր կանչի, էկավ ջրոբբվավ, չկառցավ։

Տղեն է, մեկ-մեկ, ինչ օր հավու ջանդակ վերցներ, վերուց ու թալեց բաղնից դուրս։ Օր թալեց, թագավորն ամր էրեց, ասեց.—Բացեք զդարկըներ։

Զդարկըներ օր բացին, էրկու ախբեր տեսան, հ'ելան առան զախչիկն ու էկան։ Հար քյաշ թափան էկան։ Հ'ելան գացին թամաշեն, քեմիսին գնաց ուր իդարի հ'ետև։

Թագավորն զէդ օր տեսավ, կանչեց զտղեն, ասեց.—Հ'ուզե իտամ։

Տղեն ասեց.— Ես քենե բան չըմ հ'ուզի։

Թագավորն ասեց.—Ախբը չէղնի, բանըմ լե դու հ'ուզե՞։ Դու էդա խըդար ազեկութեն էրիր մզիկ, փեշքեշըմ լե պետք չէ՞ իտանք քզիկ, զիմ ախչիկ իտամ քզիկ։

Շահզադեն ասեց.— Իմ հ'առեջ ճամբա կա, էդոր հ'ապով չըմ կարգըվի։ Աղեկութեն կէնես, զզքու ախչիկ տուր իմ ախբոր։

Թագավորն ասեց.— Թըղ էղնի։

Բերին զէդ ախչիկ պսակեցին վըր Տիրացուին, քառսուն օր հարսնիկ էրին։

Օր հարսնիկ էրին, փրթան աղատան, թագավորն ասեց.— Շահզադա, բան չըմ ասի քզիկ, բան օր կասիմ. քու մուրազ Նազլի-խանումն էղնի։

Կէլնին լուսուն, բարեմնաս կէղնին հ'իրարուց, կընկնեն ճամբախ կիգան։

Շահզադեն ու Լողորդ ախբեր մենակ կելնեն կիգան, քաղքի մը հ'ըռաստ կիգան։ Կտեսնան օր հինգ դև, հ'իրարու ախբեր կէղնեն, էկած են վըր էդ քաղքին կռիվ, թագավորի ախչիկ հ'ապով։ Կշոպկե զթուրն ու կընկնի դևերու մեջ, մեկ-մեկ կբռնե, կէնե էրկու կտոր։

Ջուհաբ կէրթա թագավորին. «Ջասե՞ր հըմլա տղե մը էկեր էր, կտեսնա օր դևեր էկած են վըր մը քաղքն, կշոպկե զթուր ու հ'ընկնի մեջ ուրանց, մեկ-մեկ կբռնե, կէնե էրկու կտոր, կթալե գետին»։

Թագավոր ճամբեց, զտղեն առան էկան։ Ասեց.— Տղա, հ'ուզե իտամ։

Տղեն ասեց.— Ի՞նչ հ'ուզիմ, բան լե չըմ հ'ուզի։

Թագավորն ասեց.—Ջանըմ, չէղնի, բանըմ հ'ուզե, իսկի հըմլա կէղնի՞։ Դու էդ խըդար մարդկութեն էրիր, փեշքեշըմ պետք չէ՞ իտանք քզիկ։ Էկո զիմ ախչիկ իտամ քզիկ։

Տղեն կասե.— Թագավոր ապրած, ես չէ օր քու ախչկան անուն կդնեմ, քու ախչիկ զիմ գլուխ զիե, մենակ ես մուրատ ունիմ, կէրթամ իմ մուրատի հ'ետև, կիտաս՝ տուր իմ ախբոր։

Թագավորն ասեց.— Թըղ էղնի։ Բերեց զախչիկ պսակեց Լողորդ ախբոր վրեն, քառսուն օր էրեց հարսնիկ ու հ'ընկավ ճամբախ, գնաց։

Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, գնաց քոշկի մը տախիլ էղավ։ Տեսավ օր Նազլի-խանում զգլուխ քոշկի փանջարից թալեր է դուրս։

Շահզադեն գնազլի-խանումն օր տեսավ, խելք գնաց գլխեն, բայիլ-միշ էղավ, հ'ընկավ դետին։ Գեժտանգեժ խելքն էկավ գլուխ։

Նազլի-խանումն ասեց.— Աղեկ մանուկ, աղեկ կտրիճ, ի՞նչ կօլբ-տես էդա տեխրանք։ Հըմկա յոթ գլխեն դևն էկավ, հում-ու լում կուտե զքզիկ։ Էկո քզիկ իտամ քիչըմ հաց, թող գնա էդ տեխրաներուց, էդ անաստված ախ կէնե ու փշում իսնի միս։

Տղենն ասեց.— Ընծիկ հաց պետկ չէ, դու զէն մ'ասի, յոթ գլխեն դև ի՞նչ ճամբով կէրթա-կիգա։

Նազլի-խանումն ցուցուց, ասեց.

— Էդա ճամբով կէրթա-կիգա։

Ջճամբախն օր ախչիկ ցուցուց, տղեն բռնեց զճամբախն ու գնաց։ Գնաց հասավ, տեսավ օր յոթ գլխեն դև կայենական ծառըմ քաշեր է, դրի վըր փեճեն, կփըքա, թող ու տուման զէրկիր կվերցու, էնդիեն կիգա։

Օր զտղեն տեսավ, զծառ բերեց (անհասկանալի բառ)*, տղեն սինղրը էրեց չառավ։ Դև թողեց զծառն ու հասան հ՝իրար։ Օր հասան հ՝իրար, տղեն բռնեց զդև ու թուրըմ թալեց, հ՝օրթալըխեն էրեց էրկու կտոր։ Վերչ կտրեց ղտրսնուշորս անկաճ, լցեց ճեպ, առավ էկավ Նազլի-խանումին։ Օր Նազլի-խանում տեսավ զյոթ գլխեն դևի անկըճներ, գնաց փաթվավ տղի վիզ, ասեց. ես՝ քզիկ, դու՝ ընծիկ։ Գրկեցին զիրար ու պառկան էղան հ՝իրարու էրիկ ու կնիկ։

Զեն ցրվըրվավ աշխարհ, թե. «Զասիս, ֆըլան թագավորի տղեն, օր անուն Շահզադա էր, զյոթ գլխեն դև սպաներ է, Նազլի-խանումն առեր է, էրի ուրեն կնիկ»։

Աշխարհ հ՝ըմեն մաթ էր մանցի. էդի իմա՞լ սպաներ է, յոթ գլխեն դևի վրեն մարդ չկառներ։

Իմալ կէղնի Աճմու շահն կքոքրի, կէլնի ճամբուց։ Հար ինչ հեքիմ, քոխման կբերեն՝ չարա չէղնի։

Պառավըմ կէլնի, կիգա կասե.— Շահ, քզիկ օր մանցեր է, մեկ բան մանցեր է։ Շահզադի կնիկ Նազլի-խանում կա, աշխըրկի մեջ հըմալ խորոտիկ չկա, էն վիր ծոցկ պառկի գիշերըմ, մեռել էղնի, կսաղնա. կէլնի կանի։ Բերես գիշերըմ քու խեչ պառկի, լուսուն կսաղնաս, կէլնիս կանիս, կէղնիս տաս տարեկան տղա։

Զէդի ո՞ր կբերե, որ չբերե։—Մեկ լե դու կբերես, պառավ.— կասե Աճմու շահն։

Կէլնի զէդ շադուքար պառավ, կդնե կճամբե կիգա, կասե.— Գնա., առ. Նազլի-խանումն ու էկո։

Պառավն է, կդեզե զձրձում ու կէլնի, կհեծնի կիգա։ Կիգա Նազլի-խանումի քոշկի դուռ կէլնի դուրս։ Կբերե զձրձում, կհորե ծովու պռուկ ու ինք կէլնի կէրթա քոշկ Նազլի-խանումի խեչ։ Կասե.— Նազլի-խանում, խուրբան էղնեմ քու գլխուն-արևուն, էս կէրթենք մուխսութենի, քարվան գնաց, ես մանցի հետ։ Քանի մը օր մնամ էդա տեխ, հար հ՝իգա քարվան, հ՝ընկնեմ հետ ուրանց, էրթամ։

Նազլի-խանում կհեբոսոտի վրեն, կէնե դուրս։ Պառավ կէլնի դուս կանի, հար Շահզադեն կդառնա կիգա։ Կպատմե. կասե՝ արի իմ հետ։ Կառնե ուր հետ, կիգա։ Կասե.—Կնիկ, զէդա պառավն հ՝որի՞ն ես էրի դուրս։ Թող էրթա, քունշըմ ուրեն կուճուրի, հար հ՝իգա քարվան, հետ ուրանց էրթա։

Նազլի-խանումն կասե.— Մարդ, լաիա չանես, էդոնց տակ շատ բան կա։

Շահզադեն կասե.— Կնիկ, էդ ի՞նչ է, օր էդոր էրածն ի՞նչ էղնի։

---

* Նանոթ. Կ.։

Մնաց քանի մ՝օր տան մեջ, ընտելցավ, էղավ անեն։ Օրերուց օրըմ ասեց.— Նազլի-խանում, դու ըսկի չըս հարցուցեր Շահզադից. քու զորութեն ի՞նչ է, օր էդի էդ հըմալ զաշխարհ զըմեն զավթեր ի։

Չկնկա խելքն առեր էր. ասեց.— Հ՝եսօր հ՝իրկուն կհարցում։

Հ՝իրկուն օր էկավ տուն, Նազլի-խանումն հարցուց, ասեց.— Մարդ, էդ քու զորութեն ի՞նչ է, օր մարդ քու վրեն չը կառնա, դու զաշխարհ զավթեր իս։

Շահզադեն ասեց.— Կնիկ, իմ զորութեն հ՝ըմեն էդա թըրի ու էդա ական մեջն է։ Օր էդա թուրն ու էդա ակ կորցուն, ես քառասուն օր սաղ կմնամ ու կմեռնեմ։

Պառավ լե կաներ էր գռան հ՝ետե, անկաճ կէներ, լսեց։ Օր լսեց, գիշեր էդոնք քնուկ են, հ՝ելավ քիչըմ սապոն առավ, բերան, գնաց առավ Շահզադի ճկութ բերան, ծրծեց, զմատնեկ հանեց, հ՝ելավ առավ զթուր, տարավ կապեց հ՝իրար ու թալեց ծովու մեջ։ Օր թալեց ծովու մեջ, Շահզադեն հ՝ընկավ հոգեքաքում, ծանդրը կտրքեր։

Պառավ քաշեց օտքեն, տարավ թալեց քունջըմ, զնազլի-խանումի ծամեր փաթեց վըր ձեռքին, քաշ-քաշ առավ գնաց ծովու պռուկ, զձրձում հանեց դուրս, հեծավ զձրձում, առավ թարկեն ու քշեց։

Տարավ, տարավ, Աճմու շահի քաղաք հանեց դուրս։ Օր հանեց դուրս, Նազլի-խանումն ասեց.—Հըմեն, հըմեն բերիք, ընծիկ քառասուն էրկու օր մոֆուլ տվեք, զիմ թադարուկ տեսնամ, նոր հ՝իգամ պառկեմ խեչ։

Քառասուն էրկու օր մոֆուլ տվին։

Էնդոնք թըղ էրթան ուրանց ճամբու հետ, մենք դառնանք վըր Տիրացու ախբոր։

Տիրացու ախբերն է, ասեց. «Ջանըմ, ընծիկ էրկու ախբեր գացին հ՝ետև սարերուն ու սալըխըմ չառա, յավաշ թուղթ մը իշքեմ, տեսնամ ինչ հալու մեջ են»։ Իշեց թուղթ, տեսավ օր Շահզադի աստղ պոծառ չէ, ասեց. «Վալայի, իմ ախբոր հալ նեղ է»։ Հ՝ելավ լուսուն ու զճամբախ տվեց հ՝առեջ, էկավ։

Կիգա Լողորդ ախբոր խեչ, կասե.—Ախբեր, մըր ախբեր Շահզադեն նեղութենի մեջ է, հ՝ելնեք էրթանք։

Կառնե զախբերն ու կէլնին կնկնին ճամբախ, կիգան։ Կիգան Նազլի-խանումի քոշկ կէլնին դուրս։ Էնդին զէն դին կզարկին զարկվին, կէրթան քունջըմ, կտեսնան օր Շահզադեն մեռուկ թալուկ է հ՝ոգի։

Տիրացու ախբերն Լողորդ ախբոր կասե.—Կեցի հ՝էսօր հիսուն ու ին օր կէնե, օր զմըր ախբոր թուրն ու մատնեկ կապած են հ՝իրար, թալած են ծովու մեջ, զբզիկ տեսնամ, Լողորդ ախբեր։

Լողլորդ ախբերն զհալվրներ թափեց վրավեն ու հ՝ընկավ ծովու լենկ

ու հ՝երկենկ, գտավ զթուր, հանեց, առավ էկավ։ Բերեց հարձրկեց, զմատնեկ էձգեց մատ, զթուր թալեց վիզ ու նստան խեչ։ Օր զմատնեկն էձգեց մատ, զթուր թալեց վիզ, Շահզադեն ճըմըլտկաց, տեխեն հ՝ելավ նրստավ։

Էն օր կերան-խմեցին, պառկան քնան։ Հ՝ելան լուսուն իրեկ ախբեր։ Տիրացու ախբերն թուղթ իշքեց, ըղռեճն հանեց։ Հ՝ընկան ճամբախ ու գացին Աճմու շահի քաղաք հ՝ելան դուրս։ Գացին պառվու մը տուն, մըսաֆըր էղան։ Օր մըսաֆըր էղան, պառվուն ասին.— էդ ի՞նչ տըհոլ ու զուռնի ձեն է։

Պառավն ասեց.— Ախբըրտանք, կառնա՞ք չհաբցուք։ Մըզիկ մուռտալ շահըմ կա, ընկավ պառվու մը քրոի հետ, ասեց. «Գնա Շահզադի կնիկ՝ Նազլի-խանումն առ ու էկո ընծիկ»։ Պառավ լե գնաց, առավ էկավ։ Հըմկա էնդոր հարսնիկն է։ Ախչիկ լե քառսուն էրկու օր մոֆուլ առեր է, մեկ ձեռք առեր է զխանչալ, մեկ լե՝ աղուն, օր ժամանակն խըլըսի չբասնեն ուրեն։ Յամ զաղուն կխմե՝ մեռնի, յամ զխանչալ կզարկե ուր սիրտ՝ փրթնի, ազատի, շահին թասլիմ չէղնի։

Պառվուն ասին.— Նանե, էդա խուրճ օսկին քզիկ, կառնա՞ս զէդա մատնեկ տանիս, իտաս Նազլի-խանումն ու հ՝իգաս։

Պառավն օր զօսկին տեսավ, ասեց.—Հ՝որի՞ չէ։

Առավ զմատնեկ, գնաց կանավ հ՝օդի դրռան մեջ ու լոռտեց, հ՝որին օր մարդ չթողեր էրթեր ուր խեչ։

Ախչիկն օր տեսավ զմատնեկ, ասեց.— Նանե, արի տեսնամ էդոր տեր դո՞ր է։

Պառավն ասեց.— Հանդե մըր տուն։

Օր ասեց հանդե մըր տուն, Նազլի-խանումն պառվուն ասեց.— Նանե, կէրթաս ուրանց կասիս. «Ես վաղ իզին կառնեմ, կէլնեմ դուրս, թըղ հ՝իգան խաս բախչի տակ, առնեն զիս ու էրթան»։

Պառավ թորկեց գնաց։

Նազլի-խանումն ասեց.— Գացեք թագավորին ասեք, վաղ թալաք թըղ իտա կանչել՝ մարդ չէլնի դուրս, էրթամ քիչըմ խաս բախչեն օլըրտեմ, հ՝իգամ, պրսակվինք։

Թագավոր տվեց թալալ կանչել, օր մարդ չէլնի դուրս, Նազլի-խանում հ՝ելավ առավ զուր բեսլամեքն ու գնաց խասբախչեն։ Շահզադեն ու ուր հ՝ընկերտանք հեծան գացին։ Շահզադեն վերցուց զնազլի-խանում, տվեց ախրըրտոց ձեռք։

Ասեց.— Դուք գացեք, ես կիգամ կհասնեմ։

Էնդոնք օր գացին, ձեն գնաց Շահին, թե «Զասիս, Շահզադեն էկավ, առավ զնազլի-խանումն ու գնաց»։ Էդ ասելու պես Շահզադեն մտավ

ներս, բռնեց Շահն ու զՓուր թալեց էրեց էրկու կտոր, դրեց գետին ու հեծավ զուր ձին, քշեց։ Հեծավ զուր ձին, քշեց. քաղաք քաղքով, ասքյար ասքրով հ՝ընկան հ՝ետև։ Դառցավ վըր էդոնց, ազուբեն էղնի մըր օսմանցու թագավորի վրեն, հըմալ շրշեց զչանդըկներ գետին, օր օտք դնելու տեխ։ չմնաց։ էկավ հասավ ախբըրտոց, առավ զուր կնիկն ու էկավ ուր քոշք հ՝իշավ։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։